ԸՆԴՈՒՆՎԵԼ Է
ԵՀՀ Ակադեմիական խորհրդի
2024-25 ուստարվա թիվ 6 նիստում
26 հունիսի 2025 թ.

ADOPTED
at session No. 6 of the YHU Academic Council
(2024-25), on 26 June 2025

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Ռեկտոր
_____ Ս. Լ. Հարությունյան
26 հունիսի 2025 թ.

APPROVED
Rector S. L. Harutyunyan
26 June 2025

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ● YEREVAN HAYBUSAK UNIVERSITY

Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ
Regulation on Conferring the Academic Titles of Professor and Associate Professor

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգը սահմանում է Երևանի Հայբուսակ համալսարանում (այսուհետ՝ ԵՀՀ) գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը:

1.2 Գիտական կոչում կարող է շնորհվել այն անձանց, որոնք ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, որպես կանոն՝ գիտական աստիճան, որոշակի ավանդ գիտության տվյալ բնագավառում և զբաղվում են գիտամանկավարժական գործունեությամբ:

1.3 Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումները շնորհվում են ԵՀՀ Ակադեմիական խորհրդի որոշմամբ՝ ղեկավարվելով սույն կարգով և ՀՀ գիտական աստիճանաշնորհման անվանացանկով:

1.4 Գիտական կոչում շնորհելու մասին որոշումը հաստատվում է համապատասխան վկայականով:

1.5 Սույն կարգը համահունչ է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակի ապահովման չափորոշիչներին և ուղեցույցներին (ESG, 2015)՝ մասնավորապես 1.5 չափորոշչին, ինչպես նաև Հետազոտողների եվրոպական խարտիային և հետազոտողների հավաքագրման վարքագծի կանոնագրքին:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Գիտական կոչում շնորհելու գործընթացը բաց է, թափանցիկ և հիմնված է վաստակի վրա: Պահանջները, ժամկետները և քվեարկության կարգը հրապարակվում են ԵՀՀ ներքին համակարգում:

2.2 Հավակնորդի գնահատումը հիմնվում է նրա ներդրման բովանդակության վրա և ներառում է գիտական աշխատանքը, դասավանդումը, ուսանողների և ասպիրանտների ղեկավարումը, ուսումնամեթոդական գործունեությունը, գիտելիքի փոխանցումը և մասնագիտական համայնքին մատուցած ծառայությունը:

2.3 Հրապարակումների թիվը և պարբերականի մակարդակի ցուցանիշները ծառայում են որպես շեմային պայման, ոչ թե որակի չափանիշ: Հավակնորդն իրավունք ունի ներկայացնելու մինչև երկու էջ ծավալով նկարագրական հիմնավորում՝ իր առավել նշանակալի հինգ արդյունքների և դրանցում իր ներդրման մասին, որը քննարկվում է կոչում շնորհելու հարցի հետ միասին (CoARA, 2022):

2.4 Հղիության, ծննդաբերության, երեխայի խնամքի, երկարատև հիվանդության, զինվորական ծառայության կամ նմանատիպ այլ հիմնավորված ընդմիջման ժամանակահատվածը չի

1. GENERAL PROVISIONS

This Regulation sets out the procedure for conferring the academic titles of Professor and Associate Professor on the academic staff of Yerevan Haybusak University (YHU).

An academic title may be conferred on a person who holds the qualification of a certified specialist or master's degree, as a rule, an academic degree, has made a definite contribution in the field of science concerned, and is engaged in academic and teaching activity.

The YHU Academic Council confers the academic titles of Professor and Associate Professor in accordance with this Regulation and the RA nomenclature for the award of academic degrees.

The corresponding certificate confirms the decision to confer an academic title.

This Regulation conforms to the Standards and Guidelines for Quality Assurance in the EHEA (ESG, 2015), in particular Standard 1.5, and to the European Charter for Researchers and the Code of Conduct for the Recruitment of Researchers.

2. PRINCIPLES OF ASSESSMENT

The process for conferring an academic title is open, transparent and merit-based. YHU publishes the requirements, time limits, and voting procedure in its internal system.

A candidate is assessed on the substance of their contribution, including research, teaching, the supervision of students and postgraduates, educational-methodological work, knowledge transfer and service to the professional community.

The number of publications and journal-level indicators serve as a threshold condition, not as a measure of quality. A candidate may submit a narrative statement of up to two pages on their five most significant outputs and their contribution to them, which is considered together with the question of conferral (CoARA, 2022).

A period of pregnancy, childbirth, childcare, prolonged illness, military service or another comparable justified interruption is not counted within the length of service and the recent-years

հաշվարկվում սույն կարգով սահմանված ստաժի և վերջին տարիների պահանջների մեջ՝ հավակնորդի դիմումի հիման վրա:

2.5 Գնահատման ընթացքում խտրականությունը սեռի, տարիքի, էթնիկական պատկանելության, հաշմանդամության կամ այլ հատկանիշի հիմքով արգելվում է:

3. ԴՈՑԵՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ

3.1 ԵՀՀ դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել՝

- գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, որոնք վերջին մեկ ուսումնական տարվա ընթացքում ԵՀՀ-ում իրականացրել են հայցվող կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն
- գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, որոնք վերջին մեկ ուսումնական տարվա ընթացքում ԵՀՀ-ում իրականացրել են գիտամանկավարժական գործունեություն և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունեն հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ
- դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ, այդ թվում՝ ԵՀՀ-ում վերջին երեք ուսումնական տարիների ընթացքում անընդմեջ իրականացրել են հայցվող կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և տվյալ բնագավառում ունեն ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական՝ առնվազն երկու աշխատանք
- մշակույթի և ճարտարապետության բնագավառներում՝ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ, այդ թվում՝ անընդմեջ աշխատել են ԵՀՀ-ում վերջին երեք տարվա ընթացքում, հանրապետական ցուցահանդեսների, փառատոների կամ մրցույթների մասնակից են, ղեկավարել են դափնեկիրների կամ հեղինակ են հանրապետական մրցույթում մրցանակ ստացած ստեղծագործության, կառույցի կամ նախագծի
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն տասը տարվա ստաժ, այդ թվում՝ ԵՀՀ-ում վերջին երեք ուսումնական տարիների ընթացքում անընդմեջ իրականացրել են համապատասխան գործունեություն, հանրապետական մրցումների կամ մրցաշարերի մրցանակակիր են կամ ղեկավարել են դրանց մասնակիցներին:

4. ՊՐՈՖԵՍՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ

4.1 ԵՀՀ պրոֆեսորի գիտական կոչում կարող է շնորհվել՝

- գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, որոնք վերջին մեկ ուսումնական տարվա ընթացքում ԵՀՀ-ում իրականացրել են հայցվող կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և դոկտորական

requirements laid down by this Regulation, upon the candidate's application.

Discrimination on grounds of sex, age, ethnic origin, disability or any other characteristic is prohibited in the course of assessment.

3. THE ACADEMIC TITLE OF ASSOCIATE PROFESSOR

The YHU academic title of Associate Professor may be conferred on:

- persons holding the academic degree of Doctor of Sciences who, in the last academic year, have carried out academic and teaching activity at YHU in the speciality of the title sought
- persons holding the academic degree of Candidate of Sciences who, in the last academic year, have carried out academic and teaching activity at YHU and who, since defending their candidate's dissertation, have published both scholarly and educational-methodological works in the field concerned
- persons holding the qualification of a certified specialist or a master's degree who have at least ten years' academic and teaching service, including three consecutive recent academic years at YHU in the speciality of the title sought, and who have at least two works in the field concerned, both scholarly and educational-methodological
- in the fields of culture and architecture, persons holding the qualification of a certified specialist or a master's degree who have at least ten years' academic and teaching service, including three consecutive recent academic years of such activity at YHU, who have taken part in national exhibitions, festivals or competitions, who have supervised prize-winners, or who are the author of at least one work, structure or design awarded a prize in a national competition
- in the field of physical culture and sport, persons holding the qualification of a certified specialist or a master's degree who have at least ten years' academic and teaching service, including three consecutive recent academic years of such activity at YHU, who are prize-winners in national competitions or tournaments or have coached participants in them.

4. THE ACADEMIC TITLE OF PROFESSOR

The YHU academic title of Professor may be conferred on:

- persons holding the academic degree of Doctor of Sciences who, in the last academic year, have carried out academic and teaching activity at YHU in the specialty of the title sought and who,

ատենախոսությունը պաշտպանելուց հետո ունեն տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ կամ մեկ պաշտպանված ատենախոսության գիտական ղեկավար են

- գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա ստաժ, վերջին հինգ ուսումնական տարիների ընթացքում ԵՃՀ-ում իրականացրել են հայցվող կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և ունեն տվյալ բնագավառի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ՝ ընդհանուր թվով առնվազն քսան, այդ թվում վերջին հինգ տարում՝ հինգ
- մշակույթի և ճարտարապետության բնագավառներում՝ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն քսանհինգ տարվա ստաժ, վերջին տասը ուսումնական տարիների ընթացքում ԵՃՀ-ում զբաղվել են համապատասխան գործունեությամբ և դոցենտի կոչումը ստանալուց հետո բավարարում են ստորև նշված պահանջներից որևէ մեկին

ա. ունեն Հայաստանի Հանրապետության կամ այլ երկրների պատվավոր կոչումներ. **բ.** միջազգային ցուցահանդեսների և փառատոների մասնակից են, ղեկավարել են մասնակիցների և ունեցել են անհատական ցուցահանդեսներ. **գ.** հեղինակ են միջազգային մրցույթներում հաղթած ստեղծագործությունների, նախագծերի կամ կառույցների:

- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, որոնք ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն քսանհինգ տարվա ստաժ, այդ թվում՝ ԵՃՀ-ում վերջին տասը ուսումնական տարիների ընթացքում անընդմեջ իրականացրել են համապատասխան գործունեություն, և դոցենտի կոչումը ստանալուց հետո ունեն ՀՀ կամ այլ երկրների պատվավոր կոչումներ կամ միջազգային մրցաշարերի մասնակից են և պատրաստել են սաներ, որոնք միջազգային մրցաշարերի մեդալակիր են:

5. ՇՆՈՐՀՄԱՆ ԸՆԹԱՑԿԱՐԳԸ

5.1 Գիտական կոչում ստանալու համար անձը դիմում է ներկայացնում ԵՃՀ ռեկտորի անունով: Դիմումին կցվում են Հավելված 1-ով սահմանված փաստաթղթերը:

5.2 Դիմումն Ակադեմիական խորհրդում քննարկվում է դիմումը ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Հավակնորդը նախապես տեղեկացվում է նիստի օրվա մասին և իրավունք ունի ներկա գտնվելու:

5.3 Գիտական կոչում շնորհելու մասին որոշումն ընդունվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Խորհուրդն իրավասու է հարցը քննարկելու անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ: Որոշումն ընդունվում է նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

5.4 Որոշումը՝ դրական կամ բացասական, հավակնորդին հաղորդվում է գրավոր՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով սույն կարգի այն պահանջը, որին դիմումը չի համապատասխանել:

since defending their doctoral dissertation, have published scholarly and educational-methodological works in the field concerned or have supervised one successfully defended dissertation

- persons holding the academic degree of Candidate of Sciences and the title of Associate Professor who have at least fifteen years' academic and teaching service, who in the last five academic years have carried out academic and teaching activity at YHU in the specialty of the title sought, and who have at least twenty works in the field concerned, both scholarly and educational-methodological, including five in the last five years
- in the fields of culture and architecture, persons holding the qualification of a certified specialist or a master's degree who have at least twenty-five years' academic and teaching service, who in the last ten academic years have engaged in such activity at YHU, and who since receiving the title of Associate Professor satisfy any one of the requirements set out below

a. they hold honorary titles of the Republic of Armenia or of other countries; **b.** they have taken part in international exhibitions and festivals, have supervised participants and have held solo exhibitions; **c.** they are the author of works, designs or structures that have won international competitions.

- in the field of physical culture and sport, persons holding the qualification of a certified specialist or a master's degree who have at least 25 years of academic and teaching service, including 10 consecutive recent academic years of such activity at YHU, and who since receiving the title of Associate Professor hold honorary titles of the Republic of Armenia or of other countries, or have taken part in international tournaments and have trained pupils who are medallists in international tournaments.

5. THE CONFERRAL PROCEDURE

A person applies to the Rector of YHU for an academic title. The documents listed in Annex 1 are attached to the application.

The Academic Council considers the application within two months of the submission date. The candidate is informed in advance of the meeting date and has the right to be present.

The Academic Council takes the decision to confer an academic title by closed, secret ballot. The Council may consider the question with the participation of at least two-thirds of its members. The decision is taken if it receives more than half the votes of the members taking part in the meeting.

The decision, whether favourable or not, is communicated to the candidate in writing within ten working days, stating the requirement of this

5.5 Բացասական որոշման դեպքում հավակնորդն իրավունք ունի մեկ տարի անց կրկին դիմելու՝ ներկայացնելով այդ ընթացքում հրատարակած նոր աշխատանքները:

6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ, ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

6.1 Խորհրդի այն անդամը, որը հավակնորդի ղեկավարն է, մերձավոր ազգականն է, վերջին երեք տարում նրա համահեղինակն է եղել կամ ունի շահերի բախում առաջացնող այլ կապ, հայտարարում է այդ մասին և չի մասնակցում տվյալ հարցի քննարկմանը և քվեարկությանը: Հայտարարությունը գրանցվում է արձանագրությունում:

6.2 Հավակնորդը կարող է որոշումը բողոքարկել ԵՀՀ ռեկտորին՝ ընթացակարգի խախտման, շահերի բախման կամ սույն կարգի ակնհայտ սխալ կիրառման հիմքով՝ որոշումը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքը քննվում է քսան աշխատանքային օրվա ընթացքում, և որոշումը հիմնավորվում է գրավոր: Գիտական դատողությունն ինքնին բողոքարկման հիմք չէ:

6.3 ԵՀՀ գիտական քարտուղարը վարում է շնորհված գիտական կոչումների ռեգիստրը, որը ներառում է կոչումը, մասնագիտությունը, շնորհման ամսաթիվը և վկայականի համարը: Դիմումի նյութերը պահպանվում են հինգ տարի:

6.4 Գիտական քարտուղարը տարեկան Ակադեմիական խորհրդին է ներկայացնում ամփոփ տեղեկատվություն ներկայացված, շնորհված և մերժված դիմումների մասին՝ ըստ կոչման և բնագավառի, առանց անձնական տվյալների:

Regulation with which the application did not comply.

If the decision is unfavourable, the candidate may reapply after one year, submitting the new works published in the meantime.

6. CONFLICT OF INTEREST, APPEAL AND RECORDS

A member of the Council who is the candidate's supervisor or close relative, who has been their co-author in the last three years, or who has another relationship giving rise to a conflict of interest, declares the fact and takes no part in the consideration of or the vote on that question. The declaration is recorded in the minutes.

A candidate may appeal the decision to the Rector of YHU on the ground of a procedural irregularity, a conflict of interest or the manifestly incorrect application of this Regulation, within ten working days of receiving the decision. The appeal is determined within twenty working days, and the decision is given with written reasons. Academic judgement is not, by itself, a ground of appeal.

The Academic Secretary of YHU maintains a register of the academic titles conferred, showing the title, specialty, date of conferral, and certificate number. The Academic Secretary retains the application materials for five years.

The Academic Secretary submits annually to the Academic Council summary information on the applications submitted, granted and refused, by title and by field, without personal data.

ՀԱՎԵԼՎԱԾ. Գիտական կոչում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը

Ներկայացվում են ռեկտորին հասցեագրված դիմումին կից՝ մեկ փաթեթով:

ANNEX. Documents required to receive an academic title

Submitted as a single package with the application addressed to the Rector.

	Փաստաթուղթը ● Document	Նշում ● Notes
ա)	բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, եթե գիտական աստիճան չկա *a copy of the higher education diploma, where there is no academic degree*	
բ)	գիտական աստիճանի դիպլոմի կամ վկայագրի պատճենը *a copy of the diploma or certificate of the academic degree*	
գ)	գիտական կոչման վկայականի պատճենը, եթե այդպիսին կա *a copy of the certificate of the academic title, where one exists*	
դ)	հրատարակված աշխատանքների ցուցակը՝ թվային նույնացուցիչներով (DOI), եթե առկա են *a list of published works with digital object identifiers (DOI) where available*	
ե)	տեղեկանք ԵՀՀ-ում իրականացրած գիտամանկավարժական գործունեության մասին *a certificate of the academic and teaching activity carried out at YHU*	
զ)	գիտության, մանկավարժության, մշակույթի կամ սպորտի բնագավառում նվաճումները հաստատող փաստաթղթերի պատճենները *copies of the documents confirming achievements in science, teaching, culture or sport*	
է)	մինչև երկու էջ ծավալով նկարագրական հիմնավորում՝ առավել նշանակալի հինգ արդյունքների և դրանցում հավակնորդի ներդրման մասին (2.3) *a narrative statement of up to two pages on the five most significant outputs and the candidate's contribution to them (2.3)*	

Բնօրինակը	**Original**	R75_YHU-Academic_Titles.pdf
Ընդունվել է	**Adopted**	26 հունիսի 2025 թ. ● 26 June 2025
URL		https://haybusak.am/dx/r/R75_YHU-Academic_Titles.pdf
Հաջորդ վերանայումը	**Next planned revision**	2028 թ. հունիս ● June 2028